

Ա. Ե. ՓԱՇԻԿԱՅԱՆ. Լ. Հ. ԿՐՈՒՍԿԱՆ

ՄԱՍՆԻ ԿԱԹՈՆԹՎԱՅԻՆ ԶԵՐՄԱՍԵՐ ՍՏՐԵՓՏՈԿՈԿԿԵՐԻ՝
ՊԱՆՏՈՏԵՆԱԹԹՈՒ, ՊԻՐԻԴՈՔՍԻՆ, ԲԻՇԻՆ և ՎԻՏԱՄԻՆ Բ₁₂
ՄԻՆԹԵԶԵԼՈՒ ՈՒՆԿՈՒԹՅՈՒՆՆԵ

Կաթը բավական հարուստ է վիտամիններով, սակայն նրան վիտամինների քանակը զգալի չափերով տատանվում է տարվա տարրեր ժամանակներում։ Կաթի մեջ վիտամինների քանակը կախված է ինչպես նրա վերամշակման եղանակներից, այնպես էլ նրանում եղած միկրոօրդանիզմների կենսունակությունից։

Մածնից մեկուսացրած տեղական չերմասեր (թէրմոֆիլ) բարձրակտիվ կաթնաթթվային ստերպտոկոկկերի առանձնահատկությունները ուսումնասիրության ժամանակ կարեոր է նաև վերանել նրանց Բ խմբին պատկանող վիտամիններ սինթեզելու ունակությունները:

Մածնի ջերմասեր բարձրակատիվ կաթնաթթվային բակտերիաների վիտամին սինթեզելու ունակությունների մասին դրական տվյալների մեջը շնորհանդիպել:

Հարց աշխատանքներ են տարվել մեզոֆիլ կտթնաթթվային սարեապտոկիկերի՝ վիտամին սինթեզելու ունակությունների ուսումնասիրության և նրանցով թթու կաթնամթերքները վիտամիններով հարստացնելու ուղղությամբ: Ա. Բ. Դավիդովը, Լ. է. Գուլկոն և Մ. Ա. Երմակովան (1956) ուսումնասիրել են կաթի ու կաթնամթերքների մեջ վիտամինների առկայությունը:

Բուցիավիլչուտն (1962) ուսումնասիրնել է մնե թվով կոկկաձև ու ձողաձև կաթնաթթվային բակտերիաներ, այդ թվում՝ մեր կողմից մեկուսացրած ձողաձև, թույլ թիու արտադրող № 1247 յուղոքրդային կաթնաթթվային բակտերիաների վիտամիններ սինթեզելու ունակությունները:

Մի շաբթ Հեղինակների, ինչպես և Բուցիավիշտուտի, ուստի հասկրությունները ցուց տվեցին, որ կաթնաթթվային բակտերիաները հիմնականում համեմատարար ավելի քիչ են սինթեզում Ախմբին պատկանող վիտամիններ:

Այդ է պատճառը՝ որ շատ կաթնաթթվային կոկկաձև բակ-
տերիաներ կաթի մեջ զարգանալով, որոց շափով սպառում են նաև
նրանում գտնվող վիտամինները:

Մեր հիմնական նպատակն էր մեկուսացնել և ընորել
այնպիսի չերմասեր կոկկաձև կաթնաթթվային բակտերիա-
ներ, որոնք ընդունակ լինեն սինթեզելու քանակապես համեմա-
տարար ավելի շատ վիտամիններ, բան իրենք սպառում են իրենց
կարիքների համար, կամ, գունե, ընդունակ լինեն սինթեզելու այլ-
քան, որքան իրենց պահանջն է տվյալ վիտամինի նկատմամբ:

Բուցիավիշտուերի հետազոտությունները ցույց են տալիս, որ
փորձարկվող կաթնաթթվային կոկկաձև բակտերիաները կաթի մեջ
աձեցնելու դեպքում նույնիսկ պակասեցրել են նրանում եղած
բիոտինի (վիտամին B₇) և պանտոտենաթթվի (վիտամին B₅) բա-
նակությունները:

Հետաքրքրական է նշել, որ մեր Bacl. jogurtii № 1247 շտա-
մը կաթի մեջ աձեցնելու դեպքում նրանում գտնվող բիոտինի բա-
նակը ավելացրել է 10%-ով: Այստեղ բերում ենք սովորական մած-
նից մեկուսացրած կաթնաթթվային չերմասեր ստրեպտոկոկինի՝
պանտոտենաթթու (B₅), պիրիդօքսին (B₆), բիոտին (B₇) և B₁₂
վիտամիններ սինթեզելու ունակության վերաբերյալ: Որպես ստու-
դիչ վերցված է ստերիլ կաթ: Փորձարկվող ստերիլ կաթը վարակ-
վել է ուսումնասիրվող կաթնաթթվային չերմասեր ստրեպտոկոկ-
իկրով և 24 ժամ պահվել 38° չերմության պայմաններում:

Փորձերը կատարվել են Տիմիրյագիկ անվան զյուղատնտեսա-
կան ակադեմիայի կաթնագործության ամբիոնի կողմից վերամշա-
կած միկրոբուղովիական եղանակներով: Մեր փորձերից ստացված
տվյալներն ամփոփված են ստորև բերված երկու աղյուսակնե-
րում:

Խնդպես երկում է աղյուսակ 1-ից կաթնաթթվային ստրեպ-
տոկոկերի № 1260 շտամը իր զարգացման 24 ժամվա ընթացքում
յուրացրել է կաթի մեջ գտնվող պանտոտենաթթվից 12,9% -ը:
№ 1263 շտամը, սինթեզման բարձր ունակության հիմքունիք,
կաթի մեջ պանտոտենաթթվի բանակն ավելացրել է 11,8% -ով:
№ 1267 շտամը պանտոտենաթթվի բանակն ավելացրել է 51% -ով:
Սակայն № № 1268 և 1307 շտամներն իրենց զարգացման ընթաց-
քում կաթի մեջ եղած պանտոտենաթթվի բանակը պակասեցրել
են: Այսպես, օրինակ՝ № 1268 շտամը յուրացրել է 56,8%, իսկ
№ 1307 շտամը՝ 56,3% պանտոտենաթթու:

Աղյուսակ 1

Կաթնաթթվային չերմասեր ստրեպտոկոկերի՝ B₃ և B₆ վիտամիններ սինթեզելու ունակությունը 24 ժամվա ընթացքում 38° չերմաթյան պայմաններում

փորձարկված շտամների № Ա-Ը	պահուածենաթթու միլիգրամ /լիտր			պիրիդօքսին միլիգրամ /լիտր		
	ստուգիչ ստերիլ կաթ	փորձարկված	%	ստուգիչ	փորձարկված	%
1260	3,40	2,96	87,1	78,0	175,0	224,2
1263	3,40	3,80	111,8	78,0	127,0	162,9
1265	2,24	2,12	93,0	157,8	35,2	22,3
1267	1,48	2,22	151	157,8	61,7	38,9
1268	1,48	0,64	43,2	157,6	113,9	72,2
1269	1,48	1,04	70,3	157,8	73,1	46,4
1304	3,40	2,76	80,1	157,8	115,8	73,3
1306	3,40	2,86	84,1	78	70	89,7
1307	2,24	0,98	43,7	78	72	92,7
1308	2,24	1,47	66,1	157,8	31,3	19,7
1313	3,40	2,20	64,5	78,0	313,0	402,0

Նույն աղյուսակի տվյալներից երևում է, որ № № 1269, 1304, 1306, 1308 և 1313 շտամներն իրենց զարգացման ընթացքում կաթի մեջ եղած պահուածենաթթուն յուրացրել են տարբեր շափերով: Բավական հաջող տվյալներ են ստացվել պիրիդօքսինի սինթեզման վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ № 1313 շտամը ստերիլ կաթի մեջ աճեցնելու դեպքում 24 ժամվա ընթացքում եռապատկել է (302%) նրանում եղած պիրիդօքսինի քանակը, № 1260 շտամը ավելացրել է 124,2%, իսկ № 1263-ը՝ 62%-ով: Ընդհակառակը, № № 1267, 1268, 1269 և 1308 շտամները կաթի մեջ պիրիդօքսինի քանակը պակասեցրել են, այն յուրացնելով տարբեր շափերով: Այսպես, օրինակ՝ № 1308 շտամը մյուսների համեմատությամբ իր զարգացման համար պիրիդօքսինի համեմատարար ավելի մեծ պահանջ ունի, ուստի նա յուրացրել է ստերիլ կաթի մեջ եղած պիրիդօքսինի 33,9%-ը: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ուսումնասիրված 9 շտամներից երեքը (№ № 1263, 1306 և 1313) սինթեզել են բիոտին վիտամինը: Այսպես, օրինակ՝ № 1263 շտամը ստերիլ կաթի մեջ 24 ժամվա ընթացքում բիոտինի քանակն ավելացրել է 58,7%, № 1306 շտամը՝ 20,3%, իսկ № 1313 շտամը՝ 14,8%-ով: Նույն աղյուսակից երևում է նաև, որ որոշ շտամներ իրենց զարգացման ընթացքում յուրացրել են կաթի մեջ եղած պատրաստի բիոտինը: Այսպես, օրինակ՝ 1260 շտամը յուրացրել

է 3,9% -ով, № 1267-ը՝ 50,5% -ով, իսկ № 1304-ը՝ 71,3% -ով։
Եթե վիտամինի բիուժեղման մեջ փորձերը ցույց տվեցին, որ
ուսումնասիրված կաթնաթթվային չերմասեր ստրեպտոկոկինից
ոչ մեկը այդ վիտամինը չի սինթեզում։

Աղյուսակ 2

Կաթնաթթվային չերմասեր ստրեպտոկոկինից՝ B₇ և B₁₂ վիտամիններ
սինթեզնու ունակությունը 24 ժամվա ընթացքում 35°C շերմաթյան պայմաններում

Վիտամինի համար համար համար	Բիուժեղման մեջութագութեար			B ₁₂ 1/16-ը		
	սառուցիչ սալերի կաթ	փորձարկի- ված կաթ- նամակարդ	%	սառուցիչ սալերի կաթ	փորձարկի- ված կաթ- նամակարդ	%
1260	25,6	24,6	96,1	1,609	0,535	31,8
1263	25,6	40,6	158,7	1,500	0,204	13,6
1265	35,6	25,8	72,4	1,500	0,330	22,0
1267	35,6	17,6	49,5	1,690	0,534	31,8
1268	35,6	29,1	81,7	1,500	0,345	23,0
1269	35,6	27,7	77,7	1,500	0,385	25,6
1304	25,6	7,3	28,7	1,690	0,328	19,8
1306	25,6	30,8	120,3	1,500	0,210	14,1
1307	35,6	25,2	70,7	1,500	0,237	15,8
1308	35,6	25,2	70,8	1,500	0,379	25,2
1313	25,6	29,4	114,8	1,500	0,382	25,5

Խնդիր երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ստերիլ կաթի
մեջ եղած B₁₂ վիտամինի քանակն զգալիորեն պակասել է, երբ
նրանում աճեցրել ենք փորձարկվող չերմասեր կաթնաթթվային
ստրեպտոկոկինից։ Այսպես, օրինակ՝ № № 1260 և 1267 շտամնե-
րը յուրացրել են ստերիլ կաթի մեջ եղած B₁₂ վիտամինի 63,8% -ը,
իսկ № № 1263 և 1306 շտամները՝ 86% -ը։

Մեր փորձերը ցույց են տալիս, որ չերմասեր կաթնաթթվային
ստրեպտոկոկինից բոլոր շտամները իրենց զարգացման համար
մեծ պահանջ ունեն վիտամին B₁₂-ի։ Հետևաբար, անհրաժեշտ է
սելեկցիայի միջոցով ընտրել այնպիսի չերմասեր կաթնաթթվային
ստրեպտոկոկին, որոնք ընդունակ լինեն համեմատաբար ավելի
քիչ քանակությամբ օգտագործել կաթի մեջ եղած վիտամին B₁₂-ը։

Ե Գ Ր Ա Կ Ա Ր Յ Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Վերոհիշյալ տվյալներն ի մի ամփոփելով կարող ենք անել
հետեւալ եղակացությունները՝

1. Մեր փորձարկված շտամներից № № 1263 և 1267-ը ստե-
րիլ մակարդված կաթի մեջ 24 ժամվա ընթացքում պահպանենա-

թթվի քանակն ավելացնում են համապատասխանաբար 11,8% և 51%:

2. Մածնի կաթնաթթվային ջերմասեր ստրեպտոկոկկերի № № 1313 և 1260 շտամները ստերիլ մակարդված կաթի մեջ 24 ժամվա ընթացքում պիրիդօքսինի քանակն ավելացնում են համապատասխանաբար 302% և 124%:

3. Թթու կաթնամթերքներում նույն ժամանակամիջոցում № 1263 շտամը բիոտինի քանակն ավելացնում է 56,7%, № 1306 շտամը՝ 20,3%, № 1313 շտամը՝ 14,8%:

4. Կաթնաթթվային ջերմասեր ստրեպտոկոկկերը կաթի մեջ եղած վիտամինի B_{12} -ը սպառում են զգալի չափով:

5. Փորձերը ցույց տվեցին, որ ոչ բոլոր կաթնաթթվային ջերմասեր ստրեպտոկոկկերն են, որ ընդունակ են B խմբին պատկանող վիտամիններ սինթեզել:

М. Ш. Пахлеванян, Л. А. Ерзинкян

Свойство термофильных молочнокислых стрептококков мацуна к биосинтезу пантотеновой кислоты, биотина пиридоксина и витамина B_{12}

Р е з ю м е

Выделенные нами из мацуна некоторые термофильные молочнокислые стрептококки в течение 24 часов своего развития способны в кисломолочном продукте синтезировать больше витаминов, чем они сами потребляют. Следовательно, приготовленные на этих штаммах кисломолочные продукты обогащаются витаминами.

Результаты исследования привели к следующим выводам.

1. Изученные нами термофильные молочнокислые стрептококки в течение 24 часов в сквашенном молоке увеличивают содержание пантотеновой кислоты: штамм № 1263—на 11,8% и штамм № 1267—на 51%.

2. Термофильные молочнокислые стрептококки в кисломолочных продуктах количество пиридоксина в течение 24 часов увеличивают: штамм № 1313—на 302% и штамм № 1260—на 124%.

3. В течение того же времени в кисломолочных продуктах штамм № 1263 увеличивает содержание биотина на 58,7%, штамм № 1306—на 20,3, а штамм № 1313—на 14,8%.

4. Термофильные молочнокислые стрептококки используют содержащийся в молоке витамин B_{12} .

5. Опыты показали, что не все термофильные молочнокислые стрептококки способны синтезировать витамины из группы В.

M. Sh. Pakhlevanian, L. A. Yerzinkian

The property of thermophilic lactic streptococci of matrun in biosynthesizing pantothenic acid, biotin and vitamin B_{12}

Summary

The investigated thermophilic lactic streptococci in sour milk raise the content of pantothenic acid from 11.8% to 51.8%, that of pyridoxin from 124 to 302% and of biotin from 14.8% to 58.7%

Therefore the sour milk products prepared on those strains are enriched with the foregoing vitamins.

Experiments have shown that not all the thermophilic lactic streptococci are capable of producing the vitamins from B group.